թախանձէին զքահանայս և զիշխանաւորս Հայոց, հաւատարիմ և սիրելի եղբայր կոչելով զնոսա, ժողովել զկրօնաւորս և պատսպարել զնոսա 'ի վանս ուրեք յԵրուսաղէմ։ Առ այս խնդիր նամականիք իշխանաւորացն Հայոց գրեալ թախանձանօք 'ի նմին ժամանակի առ Անդրիաս և Աստուածատուր Պատրիարքունս, լինել խնամակալ Լատին կրօնաւորաց, պահին տակաւին 'ի Ս. Աթոռս։ Իսկ Յոյն պատմիչն առեալ 'ի Լատին ճանապարհորդէ ումեքէ Բակիվիլ կոչեցելոյ, պատմէ այսպէս։ Ոմն 'ի պատուաւորացն Հրէից բընակեալ 'ի Կոստանդինուպոլիս, սեղանաւոր մեծի Վէզիրին և սիրելի յաչս նորա, դէպ եղեւ նմա գնալ յԵրուսաղէմ յուխտ, ցանկացաւ նաեւ գնալ 'ի վանս Սիոնի՝ ուր էին գերեզմանք Դաւթի և Սողոմոնի նախնեաց իւրոց, և խընդրեաց 'ի տեսչէ վանայ մտանել 'ի ներքս, բայց նա ոչ եթող՝ և անարգութեամբ դարձոյց զնա յետս։ Վշտացեալ ընդ այս Հրէին՝ երդուաւ յօրէնս իւր, անպատճառ նիւթել չարիս 'ի գլուխս Լատինաց։ Ի դառնալ Հրէին 'ի Կոստանդինուպոլիս՝ եւ 'ի հարցանել Վէզիրին զուղեւորութենէ նորին, ասէ՝ 'ի բազում ցաւոց և 'ի տրտմութենէ սրտի իմոյ, չեղեւ կատարեալ ուխտն իմ. զի տեսի զգերեզմանս Դաւթի և Սողոմոնի 'ի ձեռս քրիստոնէից, որք 'ի պատուի են նաեւ յաչս ձեր, և արգելուն զայլս 'ի մտանել անդր, և չէ արժան լուել ձեզ զայսմանէ և թողուլ զայնպիսի տեղի 'ի ձեռս նոցա։ Իսկ Վէզիրն ունկնդիր լեալ բանից Հրէին, հրաման եւ այլազգեաց հալածել անտի զԼատինս, և նոքա արտաքսեալ զնոսա անտի տիրեցին բովանդակ վանայ Սիոնի։ Ապա թուէ զխորանս տաճարին Ս. Յարութեան. 'ի Գիւտ խաչն, մի սեղան Լատինաց, և մի Յունաց, 3 խորան Հայոց, Սեղանն Դանիէլեանոսի սեփհական ամենայն քրիստոնէից, հանդերձ բաժանումն՝ Հայոց, Փուշ պսակն Հասլեչաց, նոյնպէս վանքն Հայր Աբրահամու, խորանն Գպթոց յետ կոյս Գերեզմանին։ Զդուռն տաճարին բանային այլազգիք որոց տարեկան եկամուտն էր 36,000 արծաթ ըռեալ, զի մէն մի ուխտաւոր Լատին հատուցանէր 10 մաճար ոսկիս, Յոյնք 5, և այլք 7, բնակիչք քաղաքին՝ 3։ Իսկ ժողովուրդք Պաղեստինոյ էին 'ի մեծի նեղութեան, զի Պէտուի կոչեալ Արաբք յարձակեալ կողոպտէին զքա-